

ХРОНИКА

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍԻ ՂԱՄՐԱՐՅԱՆ

(Մահվան 20-ամյակի առթիվ)

1968 թ. մարտի 7-ին լրացավ հայ անվանի գիտնական և մանկավարժ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ս. Պ. Ղամբարյանի մահվան 20 տարին:

Ս. Պ. Ղամբարյանը որպես քիմիկոս մեծ համբավ է ձեռք բերել գիտության մեջ: Եղել է Սովետական Հայաստանում քիմիական գիտության հիմնադիրներից մեկը՝ սլատրաստելով քիմիկոսների մի ամբողջ սերունդ, որի շնորհիվ զարգացան քիմիան և քիմիական արդյունաբերությունը Հայաստանում: Ղամբարյանը իրավամբ ՀՍՍՀ մեջ օրգանական քիմիայի նախահայրն է, նրա կազմակերպիչն ու հիմնադիրը:



Ստեփան Պողոսի Ղամբարյանը ծնվել է 1879 թ. հունիսի 23-ին Թբիլիսիից ոչ հեռու գտնվող Կոչոր ավանում, ծառայողի ընտանիքում: 1884 թ. ընտանիքը փոխադրվում է նախ Կիև, երկու տարուց հետո՝ Վարշավա և այնուհետև՝ Ռիգա, որտեղ Ղամբարյանը ստանում է նախնական կրթությունը: 1898 թ. ավարտել է Ռիգայի արական գիմնազիան: Բարձրագույն կրթություն ստացել է Գերմանիայում, 1899—1906 թվականներին սովորելով Լայպցիգի, Հայդելբերգի, Մյունխենի համալսարաններում: Մասնագիտանալով օրգանական քիմիայի մեջ և նպատակ ունենալով ավելի ևս խորացնել իր ստացած գիտելիքներն այդ բնագավառում, նա սիրով ընդունում է Ստրասբուրգի համալսարանում (պրոֆեսոր Թիլեյի մոտ) աշխատելու առաջարկը: Այստեղ աշխատում է որպես ասիստենտ, իսկ այնուհետև Բեռլինի բարձրագույն գյուղատնտեսական դպրոցում պրոֆեսոր Մեյզերհայմի մոտ՝ ավագ ասիստենտ:

Երիտասարդ քիմիկոսը Մյունխենում գերմանացի հռչակավոր քիմիկոս Հայնրիխ Վիլանդին, Վիլշտեյներին աշակերտելուց, Ստրասբուրգում, Բեռլինում շատերի հետ աշխատելուց և մանրագույն մասնիկների միացությունների գաղտնիքներին ծանոթանալուց հետո, 1911 թ. վերադառնում է Անդրկովկաս, աշխատանքի անցնում Բաքվում որպես ռուսական տեխնիկական ընկերության քիմիական լաբորատորիայի վարիչ: Այնուհետև, 1914—20 թթ. տեղափոխվելով Թբիլիսի, դասախոսում է կանանց բարձրագույն դասընթացներում (դոցենտի պաշտոնով), միաժամանակ համատեղությամբ աշխատում է հողագործության դեպարտամենտի քիմիկոսական լաբորատորիայում որպես ավագ մասնագետ:

Ս. Ղամբարյանը 1920 թ. դեկտեմբերին հրավիրվում է Երևանի համալսարան՝ որպես քիմիայի դասախոս:

Համալսարանը՝ մեր հանրապետության առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը, որի դերը բացառիկ է գիտության ու կուլտուրայի զարգացման և բարձրորակ մասնագետների պատրաստման գործում, հիմնադրվել է 1920 թ. դեկտեմբերին: Համալսարանի հիմնադրման և նրա գործունեության սկիզբնական շրջանում ամենալուրջ դժվարությունը բարձրորակ մասնագետների և տեսական պատրաստություն ունեցող դասախոսական կազմի ապահովումն էր: Հայտնի է, որ նախասովետական շրջանում Ռուսաստանի կամ արտասահմանի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթություն ստացած մարդիկ չէին վերադառնում Հայաստան գործունեության լայն ասպարեզ շունենալու պատճառով: Այդ իր հերթին դժվարացնում էր Երևանի համալսարանի որակյալ դասախոսական կազմերով ապահովելու խնդիրը:

Ս. Ղամբարյանը պատկանում է հայ մտավորականության այն ներկայացուցիչների թվին, որոնք համալսարան աշխատանքի հրավիրվեցին նրա բացման առաջին իսկ օրից: Իր ուժերն ու կարողությունները գիտությանը նվիրաբերելու պատրաստ գիտնականի համար լրիվ չափով գործունեության նոր ուղիներ ու հեռանկարներ են բացվում Սովետական Հայաստանում: Վրտնաջան աշխատանքով ձեռք բերած հարուստ գիտելիքների պաշարով նա մտնում է գիտահետազոտական աշխատանքի լայն ասպարեզ, պայքարի ելնում իր վերածնվող հայրենիքի բարգավաճման ու երջանիկ ապագայի համար: Նա րնտրել էր գիտության այնպիսի բնագավառ, որը բնական գիտությունների մեջ առավել մեծ դեր ուներ կատարելու բնությունը ճանաչելու և այն մարդուն ծառայեցնելու գործում:

Ղամբարյանի անվան հետ է կապված նաև Հայաստանում քիմիական գիտական առաջին կադրերի պատրաստման գործը:

1925 թ. Հայաստանի խորհուրդների 4-րդ համադրմարում Հայաստանի պրոֆեսորների անունից ունեցած իր ելույթում պրոֆ. Ստեփան Ղամբարյանը ասաց. «Այս տարի համալսարանը կունենա առաջին ավարտող ուսանողները, որոնք կլինեն գյուղատնտեսներ՝ մոտավորապես 15 հոգի և մանկավարժ մասնագետներ: Այդ մասնագետները, որոնք պատրաստվում են այստեղ՝ համալսարանում, կապված կլինեն երկրի հետ: Այդ ուսանողների մեջ կան մասնագետներ, որոնց նկատմամբ մենք կարող ենք միանգամայն վստահ լինել...» Գիտական մեթոդները ուսանողը կարող է յուրացնել այն ժամանակ, երբ նա ինքը ստեղծագործող է կյանքի մեջ...»: Ս. Ղամբարյանը իր ելույթում հայտնում է այն միտքը, որ համալսարանը ստեղծվեց համառ ցանքերով և նյութական մեծ զոհողություններով. նրա դասախոսական կազմը և ուսանողական ողջ կոլեկտիվը գիտակցում են գիտական մտքի և կառուցող աշխատանքի անքակտելի կապը:

Նորաստեղծ համալսարանում Ղամբարյանը իր մի քանի աշխատակիցների հետ ըստ էության հանդիսացավ քիմիական գիտահետազոտական գործի կազմակերպիչն ու գիտական մտքի և տրադիցիաների հիմնադիրը: Նա կազմակերպեց և ղեկավարեց օրգանական քիմիայի ամբիոնը, օրգանական քիմիայի լաբորատորիան և գործուն մասնակցություն ունեցավ համալսարանի մյուս քիմիական լաբորատորիաների կազմակերպմանը: Համալսարանի առաջին լաբորատորիաներից մեկը՝ անալիտիկ քիմիայի լաբորատորիան էր, որը հիմնադրվել է 1922 թ. նոյեմբերին Ս. Ղամբարյանի նախաձեռնությամբ և ցանքերով: Սկզբնական շրջանում նա համալսարանում կարգում էր ոչ միայն օրգանական



այլև անօրգանական քիմիայի դասընթաց, գյուղատնտեսական, բժշկական ու տեխնիկական ֆակուլտետներում և ղեկավարում ուսանողական գործնական աշխատանքները լսաքորատորիաներում: Ղամբարյանը սիրում էր մասսայակա- նացնել քիմիական գիտությունը և նրա նվաճումները: Այդ նպատակով նա կարգում էր հրապարակային դասախոսություններ: Ղամբարյանը մեծ հոգա- տարություն էր ցուցաբերում ընդունակ ուսանողների նկատմամբ՝ ներգրավե- լով նրանց գիտական աշխատանքի մեջ և օգնելով ընտրած մասնագիտության մեջ խորանալու: Համալսարանում 1923—24 ուսումնական տարում հիմնա- դրված ուսանողական առաջին գիտական խմբակներից քիմիականը ղեկավա- րում է Ս. Պ. Ղամբարյանը. այս խմբակը մեծ չափով նպաստում է ուսանողների մեջ քիմիայի նկատմամբ սեր արթնացնելուն և գիտական աշխատանքի ունա- կությունները մշակելուն:

Գյուղատնտեսական ֆակուլտետում և առհասարակ համալսարանում լավ էր դրված քիմիայի դասավանդումը, իսկ դրանում մեծ երախտիք ունեին առաջին հերթին քիմիական առարկաների դասախոսներ՝ պրոֆեսորներ Ստե- փան Ղամբարյանը, Լևոն Ռոտինյանը և Հակոբ Հովհաննիսյանը, որոնք ջանք չէին խնայում թե՛ քիմիայի դասավանդումը բարձր հիմքերի վրա դնելու, և թե՛ հետազոտական աշխատանքներ կազմակերպելու ուղղությամբ: Նրանց կատա- րած քլորնաչան աշխատանքի շնորհիվ այդ ֆակուլտետի շատ շրջանավարտ- ներ սիրեցին քիմիան, խորացան նրա մեջ և հետագայում դարձան այդ գիտու- թյան ճանաչված մասնագետները: Իսկ դա կարևոր հանգամանք էր, մասնավոր, եթե նկատի ունենանք, որ համալսարանում մինչև 1929 թիվը քիմիական առանձին ֆակուլտետ կամ բաժին գոյություն չուներ: Քիմիական ամբիոնները գտնվում էին գյուղատնտեսական ֆակուլտետի կազմում, այդ ֆակուլտետի շր- ջանավարտներից են հայտնի քիմիկոսներ՝ ՀՍՍՀ ԳԱ անդամ Արաքսիա Բաբա- յանը, Թղթակից անդամ Հովհաննես Զալթիկյանը, դոկտոր պրոֆեսորներ Մա- միկոն Դարբինյանը, Լևոն Լսուզարյանը, քիմիական գիտությունների թեկնա- ծուներ Ա. Հակոբյանը, Ս. Սապոնչանյանը և շատ ուրիշներ: Այսպիսով Ս. Ղամ- բարյանը անգնահատելի ծառայություն է մատուցել մեր ժողովրդին ոչ միայն քիմիական գիտության զարգացման բնագավառում, այլև իր ուսերի վրա սուրբ և նաև հանրապետությունում քիմիկոսների նոր կարգեր ստեղծելու դժվա- րին, բայց պատվավոր գործը: Ղամբարյանը աճեցրել է քիմիկոս հետազոտող- ների և ինժեներների մի ամբողջ սերունդ, որը հետագայում իր ուսերի վրա տարավ և այսօր էլ շարունակում է տանել այդ գործը՝ ավելի ու ավելի ընդար- ձակելով այն:

Անվանի գիտնական լինելով, Ստեփան Ղամբարյանը նաև հիանալի ման- կավարժ էր: Նրա դասախոսությունները բացառիկ հետաքրքիր ու գրավիչ էին:

1924 թ. դեկտեմբերից սկսած Ս. Պ. Ղամբարյանը եղել է ՀՀՍՍՀ պետական համալսարանի գիտական տեղեկագիր» պարբերական ժողովածուի խմբագրա- կան կոլեգիայի կազմում:

Մեծ է Ղամբարյանի ծառայությունը Երևանի պետական համալսարանի և պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական պարբերականների հրատարակու- թյան, գրադարանների կազմակերպման, քիմիական գիտության գրադարան ստեղծելու գործում: Նա իր անձնական գրադարանը սիրով նվիրեց քիմիական ֆակուլտետին: Եթե այսօր Երևանում ունենք քիմիական հարուստ գրականու-

Յյուն, ապա դրա համար ամենից առաջ պարտական ենք Ստեփան Ղամբարյանին, նրա հայրենանվեր աշխատանքին:

Ստեփան Ղամբարյանի 40 ամյա գիտական գործունեության հիմնական օրյակտն են հղել օրգանական թթուների պերօքսիդները և նրանց տարբեր փոխարկումները:

Օքսիդացման ռեակցիաները շատ մեծ դեր են խաղում թե՛ անկենդան, և թե՛ մանրամասն կենդանի ընթացքի մեջ տեղի ունեցող պրոցեսներում և այդ պատճառով քիմիական գիտության ձևավորվելու շրջանից սկսած հիշյալ ռեակցիաները միշտ հղել են քիմիկոս գիտնականների ուշադրության կենտրոնում: Ղամբարյանի գիտական գործունեության մեծ մասը վերաբերում էր օքսիդացման պրոցեսներում պերօքսիդներ ազդման մեխանիզմի ուսումնասիրությանը: Առաջին աշխատանքները նվիրված էին դիֆենիլամինի օքսիդացմանը զանազան օքսիդիչներով մասնավորապես բենզոիլ պերօքսիդով. այս աշխատանքները կատարվել են Մյունխենում 1905—1907 թվականներին Բավարիայի գիտությունների ակադեմիայի լաբորատորիայում: Այդ շրջանի հետադասությունների արդյունքները հրապարակված են:

Այդ աշխատանքներում Ս. Ղամբարյանը ցույց է տվել դիֆենիլամինի հիշուության օքսիդանալու ընդունակությունը և առաջին անգամ դիֆենիլամինից ստացել է տետրաֆենիլհիդրազին՝ և նկարագրել նրա հատկությունները: Տետրաֆենիլհիդրազինի ստացման նրա մեթոդը ընդունվել և զետեղվել է գերմանացի գիտնական Պ. Հոբբենի «Օրգանական քիմիայի մեթոդները» ձեռնարկի մեջ: Դիֆենիլամինի օքսիդացումը կալիումի պերմանգանատով և տետրաֆենիլհիդրազինի ստացումը, որ մշակել է Ս. Պ. Ղամբարյանը, դարձել են պրիպարատիվ եղանակ և մտել դասագրքերի մեջ: Այդ ուսումնասիրությունները, Ս. Ղամբարյանը շարունակում է և 1907—1909 թթ. Ստրասբուրգի համալսարանի անօրգանական քիմիայի ամբիոնում: Այդտեղ նա պարզել է տետրաֆենիլհիդրազինի ճեղքման ընթացքը քլորաջրածնի ազդեցությամբ և մշակել է դիրենզոլի և դիացետիլ պերօքսիդների ստացման եղանակը, ուսումնասիրել այդ երկու պերօքսիդների ռեակցիան դիֆենիլամինի հետ, որը արտահայտվում է բարդ փոխարկումներով:

Բեռլինում 1909—1910 թթ. աշխատելով որպես ավագ ասիստենտ օրգանական քիմիայի գծով, ըստ լաբորատորիայի տրագիցիայի, որտեղ էդ. Բուխները աշխատում էր իր հայտնի խմորասնկային նյութի վրա, Ղամբարյանը նույնպես ընդգրկվում է բիոքիմիայի բնագավառը: Ի. Մեյզենհայմերի և Լ. Սեմպերի հետ միասին նրա կատարած հետազոտություններում ցույց է տրվում, որ խմորասնկային նյութը, մշակելով թրթնչկաթթվով և գոյացած նստվածքը հեռացնելով ֆիլտրատից, անջատվում է ինվերտին պրեպարատը: Ցույց է տրվում, որ խմորասնկերի մարզեցման ճանապարհով, նրանց պահպանելով եղեգնաշաքարի մեծ քանակության մեջ, ինվերտինի պարունակությունը նրանցում բավականաչափ բարձրանում է:

Բաքվում քիմիական լաբորատորիայի վարիչ եղած Ժամանակ (1911—14 թթ.) նրա աշխատանքը կրել է անալիտիկ բնույթ:

Թբիլիսիում հողագործության ղեկավարամենտի քիմիա-բակտերիալոգիական լաբորատորիայում (կենտրոնական գյուղատնտեսական լաբորատորիա) 1914—1918 թվականներին Ս. Ղամբարյանը ղեկավարել է զեմստվոյական միության կից դաբաղման հանձնաժողովի անալիտիկ աշխատանքները: Կով-



դաբաղման հանձնաժողովի անալիտիկական աշխատանքները կովկասի ադաղսյին (դաբաղման) բույսերի անալիզների արդյունքները հրատարակվել են երկու ժողովածուներում:

Գայով Սովետական Հայաստան, Ս. Պ. Ղամբարյանը իր աշակերտների հետ միասին Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունների լաբորատորիաներում ավելի լայն ծավալով շարունակում և լաբորաներում սկսած իր ուսումնասիրությունները գերազանցապես օրգանական պերօքսիդների փոխադրեցության մեխանիզմների ուղղությամբ:

Համալսարանի գիտական տեղեկագրի առաջին համարում (1925 թ.) Ս. Պ. Ղամբարյանը տպագրում է իր «Բենզիլպերօքսիդ և սեկունդներ ամինները» կյասիկ աշխատությունը, որը հրատարակվել է նաև գերմաներեն լեզվով: Այդ աշխատանքում ցույց է տրված, որ հետազոտված սեկունդներ ամինները բենզիլպերօքսիդի հետ տարբեր արագությամբ են ռեակցիայի մեջ մտնում: Նդրակացվում է, որ բենզիլպերօքսիդի ճեղքումը տեղի է ունենում պերօքսիդային թթվածինների մեջ:

Այսպիսով գերմանացի գիտնական Ա. Բայերի տեսակետին հակառակ, որ պերօքսիդները ռեակցիայի մեջ մտնելով, զանազան վերականգնիչների հետ տրոհվում են ոչ սիմետրիկորեն՝ C—O կապի տեղից, Ղամբարյանը հանգեց այն եզրակացության, որ պերօքսիդի մոլեկուլը ռեակցիայի առաջին փուլում սիմետրիկորեն տրոհվում է պերօքսիդային ամենաթույլ O—O կապի տեղից, որոշ դեպքում առաջացնելով ազատ ռադիկալներ-վալենտականորեն չհանգեցած լեկտրոններ: Հետագայում բազմաթիվ այլ գիտնականները հաստատել են այդ եզրակացությունը, հենվելով Ս. Ղամբարյանի աշխատությունների վրա:

Ս. Ղամբարյանը այս ուղղությամբ իր աշխատանքները շարունակում է Հ. Զալթիկյանի հետ: Ս. Ղամբարյանը և Հ. Զալթիկյանը տպագրում են «Օ-րենզոիլ-N-N-դիբենզիլհիդրօքսիլամինի քայքայումը» վերնագիրը կրող աշխատանքը, որը տպագրված է նաև գերմաներեն լեզվով:

Ս. Ղամբարյանը և Ղազարյանի հետ ուսումնասիրել և ալիֆատիկ շարքի ամինների ռեակցիան ինչպես բենզոիլ- նույնպես և ացետիլպերօքսիդի հետ: Ա. Բաբայանի հետ ուսումնասիրել է ռեակցիաների բավականաչափ բարդ ընթացքը առաջնային, մասամբ նաև երկրորդային ամինների հետ:

Աշխատանքների այս շարքը սրանով չի վերջանում, այլ շարունակվում է Ս. Սապոնչյանի հետ:

Իր կատարած այս աշխատանքների մասին զեկուցել է Մենդելեևյան համագումարում (Խարկով), Օրգանական պերօքսիդների ուղղությամբ Ս. Ղամբարյանի հետադոտությունները հանդիսացան օրգանական քիմիայի այդ բնագավառի հիմնաքարը:

Զուտ գիտական կարգի հարցերից բացի նա տարվել է նաև գործնական նշանակություն ունեցող աշխատանքներով՝ սկզբում Անասնաբուժական և անասնաբուժական ինստիտուտում, իսկ այնուհետև նաև պոլիտեխնիկական ինստիտուտում: Պատրաստվել և անասնաբուժական պրակտիկայում փորձարկվել են ացետիլենի քլորային ածանցյալները՝ պերքորէթիլենը (Մասինո, Դավթյան), հեքսաքլորէթան (Շուլցե, Դավթյան և Սումյագին):

Նա իր ուղադրությունը թեքում է դեպի կիրառական քիմիան: Նրա խորաթափանց միտքը կանխագուշակում է, որ քիմիան կենսական ուժ պիտի տա մեր ումուր լեռներին, շալթի դրանց և ծառայեցնի մարդուն: Սակայն դրա հա-

մար անհրաժեշտ էր պայմաններ ստեղծել, կադրեր պատրաստել: 20-ական թվականներին ստեղծվում է Կենտրոնական միացյալ լաբորատորիան, որի առաջնահերթ խնդիրն էր՝ լուծել հանրապետության քիմիական արդյունաբերության զարգացման հետ կապված պրոբլեմները: Լաբորատորիայի հինգ բաժիններից մեկի՝ ընդհանուր գիտահետազոտական բաժնի վարիչ է նշանակվում պրոֆ. Ս. Ղամբարյանը: Նա ոչ միայն հաջողությամբ գլխավորում է իր բաժնի աշխատանքները, այլև հետևում և ուղղություն է տալիս մյուս բաժիններին:

Ուսումնասիրելով Դավալուի կրաքարի բաղադրությունը հայ քիմիկոսները պտան, որ դրանից կարելի է ստանալ բարձր որակի կարբիդ, որը կարող է հումք լինել ացետիլենի և ապա այլ քիմիական նյութերի ստացման համար: 1927 թ. ապրիլի 3-ին, այժմյան ռետինատեխնիկական գործարանի տեղում կառուցված ոչ մեծ շենքում գործադրվում է կարբիդի՝ միության մեջ առաջին վառարանը: Ծրագրվում է կալցիումի կարբիդի բազայի վրա ստեղծել պարարտանյութերի արտադրություն, քանի որ գյուղատնտեսության հետագա զարգացումը ինչպես մեզ մոտ, այնպես էլ միության մեջ չէր կարող ապահովվել սուսնից քիմիական պարարտացման:

Առաջին հնգամյակի տարիներին, երկրի ինդուստրացման խնդիրների իրականացման կապակցությամբ, սուր կիրպով ծառայում է սեփական կառույցի ունենալու հարցը: Այդ առթիվ պրոֆ. Ս. Ղամբարյանը գրում է. «Հավանական է, որ մեր պայմաններում կառուցելի պրոբլեմը կլուծվի գլխավորապես սոհհետական կառուցել պատրաստելու միջոցով» (Ս. Ղ. թերթի 1933 թ. ապրիլի 4): Տեսականորեն հիմնավորելով ացետիլենից կառուցել ստանալու դադափորը, նա հանձնարարում է լաբորատորիային՝ ձեռնամուխ լինել այդ գործին:

Ացետիլենից կառուցել ստանալու պրոբլեմի լուծումով նոր մեծ հնգանկարներ են բացվում հատկապես հայկական բարձրորակ կարբիդի կիրառման առարկաներում: Ս. Ղամբարյանը գտնում է, որ «կարբիդի համար գտնվել է նոր ու հավանորեն բոլոր ուրիշ կիրառումներից ամենակարևորը»: Նա հիմնավորում է կարբիդի և այդ բազայի վրա կառուցելի և ծածկող մյուս նյութերի արտադրության ընդլայնման մեծ հնարավորությունները Հայաստանում: Սկսվում է սինթետիկ կառուցելի գործարանի շինարարությունը: Սակայն ճանապարհին կային շատ դժվարություններ, հարկավոր էր մշակել կառուցելի արտադրության տեխնոլոգիական պայմանները և, որ ունենակարևորն է, պատրաստել կադրեր քիմիական գիտության և արտադրության համար, ստեղծել ավելի մեծ մասշտաբի գիտահետազոտական հիմնարկներ: Նա մեծ օգնություն ցույց տվեց գործարանի կառուցման և արտադրության կազմակերպման գործին:

Հայաստանի կառավարության հանձնարարությամբ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի օրգանական քիմիայի լաբորատորիայում պրոֆ. Ս. Ղամբարյանի ղեկավարությամբ կատարվում է քլորապրենային կառուցելի ստացման առանձին պրոցեսների մշակումը: Այդ աշխատանքները մի տեղ կենտրոնացնելու նպատակով պրոֆ. Ս. Ղամբարյանն առաջարկում է ստեղծել կիրառական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտ: Բիտահետազոտական լաբորատորիաները, — գրում է նա, — կազմում են քիմիական գործարանների ուղեղը: Հատկապես մեծ է դրանց դերը արդյունաբերության այնպիսի ճյուղերում, որոնք սինթետիկ կառուցելի նման նոր են ստեղծվում և մտնում բուռն զարգացման շրջանը:



Կառուցելի արտադրությունը իրենով սլայմանավորեց հանրապետությունում ավտոգոգերի, բազմատեսակ սինթետիկ պոլիմերների, պլաստմասսաների, լաբերի ու ներկերի, ռետինատեխնիկական իրերի արհեստական կաշիների, թաղանթանյութերի, պլաստիկատների, լինոլեումի, և վերջապես արհեստական թելերի, թունաքիմիկատների և շատ այլ նյութերի արտադրության ստեղծումը։ Ս. Ղամբարյանի անվան հետ սերտորեն կապված են Ալ. Մյասնիկյանի անվան Կիրովականի քիմիական կոմբինատի հիմնադրումը ու արտադրության կազմակերպումը։

1935 թ. Հայաստանում կազմակերպվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը (Արմֆան), որի կազմում Ս. Ղամբարյանի ակտիվ ջանքերով ստեղծվում է քիմիայի գիտահետազոտական ինստիտուտը։ Ղամբարյանը մինչև 1937 թ. գլխավորում է նաև այդ ինստիտուտի օրգանական քիմիայի բաժինը, որը կատարում է կիրառական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտի դեր։

1944 թ. Ս. Ղամբարյանը գլխավորել է Քիմիական ինստիտուտի ացետիլենի քիմիայի լաբորատորիան։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, գիտության վստահակավոր գործիչ, պրոֆեսոր Ստեփան Պողոսի Ղամբարյանի հիշատակին նվիրված երեկոյում, որ կազմակերպվել էր 1962 թ. մարտի 27-ին Դ. Ի. Մենդելևեի անվան համամիութենական քիմիական ընկերության հայկական բաժանմունքի նախաձեռնությամբ, հրախուշատ պրոֆեսորի սաները իրենց ելույթներում Ղամբարյանին բնութագրեցին որպես մեծ գիտնականի և մանկավարժի, որը մինչև կյանքի վերջին օրը իր անսպառ եռանդն ու գիտական կարողությունը սիրահոգար ի սպասս դրեց մեր հանրապետության մեջ քիմիական արդյունաբերության զարգացման քիմիական որակյալ կադրերի պատրաստման և քիմիական գիտության զարգացման մեծ և շնորհակալ գործին։ Ժողովը որոշեց հարց հարուցել Հայկական ՍՍՀ ԳԱ օրգանական քիմիայի ինստիտուտը Ս. Պ. Ղամբարյանի անունով կոչելու մասին։

Ս. Ա. ԲԱՏԻԿԱՆ